ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ և գ. Կաթնաղբյուրի հիմնական, ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու և գ. Մեդովկայի հիմնական, ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն և Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագրում 2021 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1898-Ն և N 1906-Ն որոշումը:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
28.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 գնման պայմանագրի

ք. Երևան «13» 12 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1898-Ն և N 1906-Ն որոշումները և ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ և գ. Կաթնաղբյուրի հիմնական, ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու և գ. Մեդովկայի հիմնական, ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն և Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

2.4 Համաձայնագրի հավելվածը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011035855, 900011035863, 900011035822, 900011035814, 900011035772, 900011035780 ՀՎՀՀ 02565827	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1150009355815863 ՀՎՀՀ 01528652
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Ա. Վարդանյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
28.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 գնման պայմանագրի
«13» 02 2021թ. կնքված N 3 համաձայնագրի

<<Հավելված
28.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ և գ. Կաթնաղբյուրի հիմնական, ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու և գ. Մեդովկայի հիմնական, ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն և Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	հաշվեհամար	անվանումը	Մինչև 2020 թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/5	900011035855	ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 834 268	-	-	-	1 090 800	1 090 800	1 090 800	1 510 600	3 287 814	3 287 814	5 408 528	5 408 528	7 185 728	**7 185 728**
		900011035863	ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 834 268	-	-	-	1 198 900	1 198 900	1 198 900	1 654 800	3 601 717	3 601 717	5 932 834	5 932 834	8 880 434	**8 880 434**
2	71351540/4	900011035822	ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 933 220	-	-	-	1 188 500	1 188 500	1 188 500	1 641 400	3 572 291	3 572 291	5 882 882	5 882 882	9 743 382	**9 743 382**
		900011035814	ՀՀ Լոռու մարզի գ. Մեդովկայի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 933 220	-	-	-	1 100 900	1 100 900	1 100 900	1 524 700	3 318 468	3 318 468	5 458 736	5 458 736	5 458 736	**5 458 736**

3	71351540/3	900011035772	ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 933 220	-	-	-	1 354 600	1 354 600	1 354 600	1 861 800	4 052 236	4 052 236	6 686 472	6 686 472	6 686 472	**6 686 472**
		900011035780	ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 933 220	-	-	-	1 131 500	1 131 500	1 131 500	1 565 800	3 408 012	3 408 012	5 607 924	5 607 924	5 607 924	**5 607 924**
ԸՆԴԱՄԵՆԸ				**17 401 416**	-	-	-	**7 065 200**	**7 065 200**	**7 065 200**	**9 759 100**	**21 240 538**	**21 240 538**	**34 977 376**	**34 977 376**	**43 562 676**	**43 562 676**

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035855, 900011035863,
900011035822, 900011035814,
900011035772, 900011035780
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն
_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

N 7772-02
«02» 12 20 21

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,287,795 (մեկ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 02.12.2024թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

N 7771-02
«08» 12 2021

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 858,530 (ութ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 02.12.2024թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա.Մարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Մարգսյան